

ՕԳՈՍՏՈՍ 2023

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



Երևան 2023

1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	4
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	7
1.3. Ջրահեռացման համակարգ	8
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	9
1.5. Էներգահամակարգ	9
2. Առևտրային տնօրինություն	10
2.1. Բաժանորդների տվյալներ	11
2.2. Հասույթ	11
2.3. Գանձում	13
2.4. Դեբիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/	13
2.5. Ջրաչափեր	14
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	15
3. Տեխնիկական տնօրինություն	16
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	17
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	18
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	20
3.4. Ջրատար համակարգի բարելավում	20
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	21
3.6. 1-85 թեժ գիծ	22
4. Լրատվական ծառայություն	23
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	26
5.1. Դասընթացներ/սեմինարներ	27
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	29
5.3. Բժշկական զննություններ և հետազոտություններ	29
5.4. Արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ	30
5.5. ԲՆԿ ստանդարտների ինքնազննահատման, ընկերության համակարգում ներդրման, նոր ԲՆԿ ստանդարտների հայերեն լեզվով թարգմանության և աղապատացման աշխատանքներ	30
5.6. ԱՊՄ-ների և ԿՄՊ-ների ձեռքբերման և բաշխման աշխատանքներ	30

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

● «Էրեբունի» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող գյուղ Նոր Խարբերդ 19 փողոցի ջրագիծը, որը կառուցվել էր բնակիչների կողմից և տեխնիկապես սխալ, գտնվում էր քայքայված, վթարային վիճակում: Տեղամասի աշխատակիցների կողմից համայնքապետարանի հետ համատեղ վերոնշյալ փողոցում իրականացվել է նոր ջրագծի կառուցում $D=110$ մմ $L=450$ գծ/մ պոլիէթիլենային խողովակներով: Աշխատանքների ընթացքում թվով 75 բնակիչ-բաժանորդի ջրաչափական հանգույցները տեղափոխվել են սահմանագատման կետ:

● «Հարավ» տեղամասի աշխատակիցների կողմից Բայդուկով փողոցի $d=50$ մմ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է $d=63$ մմ $L=170$ գծ/մ պոլիէթիլենային խողովակներով: Վերակառուցման աշխատանքների շրջանակում թվով 21 բաժանորդի ջրաչափական սարքեր փոխարինվել և տեղափոխվել են սահմանագատման կետեր: Ջրամիացման հանգուցակետում կառուցվել է $d1000$ $H1000$ դիտահոր և տեղադրվել է $d=50$ մմ փական: Կատարված աշխատանքների արդյունքում ապահովվել է ջրամատակարարման շարունակականությունը, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, խնայվել է մոտ 3/4 ջրաքանակ:



● «Հյուսիս» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Ավան, Բաբաջանյան և Աշխարհ փողոցների խաչմերուկում գտնվող $d=500$ մմ ջրատարը անցնում էր սեփականություն հանդիսացող տարածքով, ինչը խոչընդոտում էր ջրատարի նորմալ շահագործմանը: Տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է $d=500$ մմ $L=41$ գծ/մ շրջանցող ջրագիծ:

● Գյուղ Պտղնի /«Վիլա Հիլս» ի հարևանությամբ/ Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների և հարակից տարածքների ջրամատակարարումը իրականացվում է Արգնի 1 $d=900$ մմ թուջե ջրատարով, որի $L=18$ գծ/մ հատվածը ամբողջովին հայտնվել էր «Վիլա Հիլս» ռեստորանային համալիրի բակում: «Արաբկիր» տեղամասի աշխատակիցների կողմից վթարված հատվածը վերանորոգվել է: Կատարված աշխատանքների արդյունքում վերականգնվել է Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների և հարակից տարածքների ջրամատակարարումը:



● Գյուղ Բալահովիտ /Մհուրի ջրամբարի հարևանությամբ/ Բալահովիտ գյուղի մի մասի և հարակից տարածքների ջրամատակարարումն իրականացվում է $d=600$ մմ պողպատե ջրագծով, որից սնվող բաժանորդները երկար տարիների ընդհացքում բողոքում էին ջրի անբավարար քանակությունից: «Արաբկիր» տեղամասի աշխատակիցների կողմից կատարվել է հավելյալ ջրամիացում և տեղադրվել է պոմպակայան: Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է Բալահովիտ գյուղի մի մասի և հարակից տարածքների ջրամատակարարումը:



● «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածում գտնվող Քասախ համայնքում, Ավետիսյան և Թումանյան փողոցներում, տեղամասի աշխատակիցների կողմից նշված հատվածով անցնող քայքայված ջրագիծը փոխարինվել է $d=90$ մմ $L=110$ գծ/մ և $d=63$ մմ $L=100$ գծմ պոլիէթիլենային խողովակներով:

Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է խմելու ջրի որակը, վերացել են ջրակորուստները և կրճատվել են հաճախակի վթարների արդյունքում առաջացող շահագործման ծախսերը: Կատարվել է բաժանորդների անհատական միացումների տեղափոխում նշված ջրագծերի վրա:



● «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածում գտնվող հ. Քանաքեռավան, 10-րդ փողոցով անցնող $d=100$ մմ ջրագծի հատվածում առկա էր գաղտնի վթար, առկա էր ջրակորուստ:

Կատարված վթարա-որոնողական աշխատանքների արդյունքում նշված փողոցի 74 հասցեի դիմաց հայտնաբերվել է գաղտնի վթարը, փոխարինվել է $d=100$ մմ, $L=2$ գծմ խողովակի հատվածը: Արդյունքում բարելավվել է խմելու ջրի որակը, խնայվել է 5լ/վ ջրաքանակ:

● «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածում գտնվող Եղիազարյան 34/2 հասցեի դիմացով անցնող $d=80$ մմ մետաղական ջրագիծը գտնվում էր քայքայված վիճակում: Տեղամասի աշխատակիցների կողմից նշված հատվածի ջրագիծը փոխարինվել է $d=80$ մմ, $L=14$ գծ/մ մետաղական խողովակով:

● «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածում գտնվող հ. Նոր Երզնկա, 2-րդ փողոցով անցնող $d=50$ մմ քայքայված ջրագիծը փոխարինվել է $d=63$ մմ $L=100$ գծ/մ պոլիէթիլենային խողովակով:

Գեղարքունիքի մարզ

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես՝

● «Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից Սևան Կենտրոնական ՕԿՁ-ում՝ ՕԿՁ-ից դեպի քաղաք ջրաքանակի ճիշտ հաշվառման նպատակով, Սևան համայնքը սնող $d=400$ մմ պողպատե ջրատարի վրա տեղադրվել է $d=200$ մմ հոսքաչափ:



Արագածոտնի մարզ



● «Աշտարակ» տեղամասի աշխատակիցների կողմից գ.Կարբի 1-ին փողոց 5-րդ փակուղում կառուցվել է $d=63$ մմ $L=300$ գծմ ջրագիծ, որի արդյունքում բարելավվել է մատակարարվող ջրի որակը: Շահագործումից հանվել է թվով 23 $d=20-25$ մմ անհատական կառուցված ջրագծեր, որոնք հաճախ վթարվում էին: Ջրաչափական սարքերը տեղափոխվել են սահմանազատման կետ, արդյունքում տնտեսվել է մոտ 0,5-1լ/վ ջուր:

Արմավիրի մարզ

● «Էջմիածին» տեղամասի աշխատակիցների կողմից Արմավիրի մարզի, Խոյ համայնքի Արագած գյուղի, 1-ին և 7-րդ փողոցների $d=80$ մմ $L=620$ գծմ պողպատե քայքայված խողովակաշարը փոխարինվել է $d=63$ մմ $L=620$ գծմ պեթ և $d=20$ մմ $L=200$ գծմ խողովակաշարերով: Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ փողոցների ջրամատակարարումը կարգավորվել է, ապահովվել է նշված փողոցների բաժանորդների անխափան ջրամատակարարումը, վերացվել են ջրակորուստները, կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ գնահատում, տեղի է ունեցել հասույթի աճ, ապահովված է ջրամատակարարման գրաֆիկը՝ ժամանակի առումով: Շահագործումից հանվել է $L=620$ գծմ խողովակաշար:



Մյունիքի մարզ

● «Մեդրի» տեղամաս. Չվար-Մեդրի $d=150$ մմ մետաղական ջրագիծը գտնվում էր քայքայված վիճակում: Հաճախակի վթարները կանխելու նպատակով աշխատակիցների կողմից Չվար-Մեդրի $d=150$ մմ մետաղական ջրագիծը Մեթանց աղբյուրի մոտ փոխարինվել է $d=110$ մմ $L=102$ զձմ պլեյ խողովակով:




Ջրահեռացման համակարգ

● «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածում գտնվող Աջափնյակ վարչական շրջան, Շիրազի 40 հասցեի դիմացով անցնող կոյուղագիծը խիստ քայքայված էր, անհնարին էր դարձել կոյուղագծի հետագա շահագործումը, որը առաջացրել էր ոչ սանիտարահիգենիկ վիճակ: Տեղամասի աշխատակիցների կողմից նշված կոյուղագծի հատվածը փոխարինվել է $d=200$ մմ, $L=4$ զձմ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակով: Կատարված աշխատանքների արդյունքում վերացել են հաճախակի կրկնվող խցանումները, նվազել են շահագործման ծախսերը:



● «Զեյթուն» հենակետի սպասարկման տարածքում գտնվող Ուլնեցի փողոց 58/20 հասցեի հարակից շենքերի ջրահեռացումն իրականացվում էր $d=400$ մմ կերամիկական կոյուղագծով, որի $L=6$ զձմ/մ հատվածը ժառանգ էր, հաճախակի էին կրկնվող խցանումները: Կոյուղագծի որոշակի հատվածում անհնարին էր դարձել խցանման բացման աշխատանքների իրականացումը և հետագա շահագործումը: Տեղամասի աշխատակիցների կողմից վթարված հատվածը փոխարինվել է $d=400$ մմ $L=6$ զձմ/մ պոլիէթիլենային ծալքավոր կոյուղու խողովակով իրականացվել են ընդհանուր երկարությամբ $L=60$ զձմ/մ $d=400$ մմ Ուլնեցի 58/20 և հարակից շենքերի կոյուղագծի մաքրման և պրոֆիլակտիկ լվացման աշխատանքներ: Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ շենքերի ջրահեռացման համակարգի աշխատանքը կայունացել է:

● «Զեյթուն» հենակետի սպասարկման տարածքում գտնվող Բուսաբանական 3/3 հարակից շենքերի ջրահեռացումը իրականացվում էր $d=300$ մմ կերամիկական կոյուղագծով, որի $L=6$ զձմ/մ հատվածը ժառանգ էր, հաճախակի էին կրկնվող խցանումները: Կոյուղագծի որոշակի հատվածում անհնարին էր դարձել խցանման բացման աշխատանքների իրականացումը և հետագա շահագործումը: Տեղամասի աշխատակիցների կողմից վթարված հատվածը փոխարինվել է $d=300$ մմ $L=6$ զձմ/մ պոլիէթիլենային ծալքավոր կոյուղու խողովակով իրականացվել են ընդհանուր երկարությամբ $L=60$ զձմ/մ $d=300$ մմ Բուսաբանական 3/3 և հարակից շենքերի կոյուղագծի մաքրման և պրոֆիլակտիկ լվացման աշխատանքներ: Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ շենքերի ջրահեռացման համակարգի աշխատանքը կայունացել է:



● «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Դավթաշեն վարչական շրջանի 1-ին փողոց 2-րդ նրբանցքով անցնող կոյուղագիծը խիստ քայքայված էր, անհնարին էր դարձել կոյուղագծի հետագա շահագործումը, որը առաջացրել էր ոչ սանիտարահիգենիկ վիճակ: Տեղամասի աշխատակիցների կողմից նշված կոյուղագծի հատվածը փոխարինվել է $d=200$ մմ, $L=120$ զձմ գոֆրե խողովակով, վերակառուցվել է թվով 9 դիտահոր:

Կատարված աշխատանքների արդյունքում վերացել են հաճախակի կրկնվող խցանումները և դրանցով պայմանավորված ոչ սանիտարահիգենիկ վիճակը, նվազել են շահագործման ծախսերը:



Օգոստոս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	824
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	19508
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	15233
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	633
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	0
Շահագործումից հանված ջրագիծ	մ	1613.5
Կառուցված ջրագիծ	մ	7997
Կառուցված կոյուղագիծ	մ	923
Վերացված գաղտնի վթարներ	հատ	35
Փոխարինված փական	հատ	97
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	337
Մաքրված դիտահոր	հատ	1525
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	25.0
Վերացված վթարներ		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1059
Ջրահեռացման ցանցում	հատ	1443
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Օգոստոս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	1077	1013	895

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է օգոստոս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ										Ընդամենը
	15	20	25	30	32	40	50	65	80	100	
Տեղադրված	223	3	1	0	6	0	0	0	0	0	233
Փոխարինված	362	19	9	0	13	3	4	2	2	3	417
Տեղափոխված											0
Տեխ. ակտ	239	11	2	0	3	2	24	1	3	0	285
Ընդամենը	824	33	12	0	22	5	28	3	5	3	935

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 935 ջրաչափ: Կատարված աշխատանքների 88%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Օգոստոս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում ւ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/ւ
1	Արաբկիր	0	222	12
2	Քանաքեռ-Զեյթուն	0	186	12
3	Մաշտոց	100	215	137
4	Շահումյան	0	223	98
5	Շիրակ	1420	436	51
6	Արթիկ	0	103	15
7	Ապարան	0	46	6
8	Ալավերդի	450	22	0
9	Աշոցք	0	3	0
10	Բերդ	90	17	36
11	Իջևան	0	55	255
12	Լոռի	0	268	0
13	Նոյեմբերյան	0	23	0
14	Սպիտակ	0	20	0
15	Ստեփանավան	2685	32	0
16	Թալին	0	22	0
17	Տաշիր	0	8	0
18	Չարենցավան	0	111	0
19	Աբովյան	0	109	12
20	Հրազդան	0	102	36
21	Կենտրոն	170	202	22
22	Հյուսիս	300	227	0
23	Էրեբունի	0	135	120
24	Հարավ	0	293	0
25	Արմավիր	0	99	0
26	Արտաշատ	0	107	4
27	Էջմիածին	0	101	0
28	Աշտարակ	2970	31	6
29	Արարատ	0	54	0
30	Մասիս	0	60	0
31	Գավառ	430	40	0
32	Սևան	1930	95	4
33	Մարտունի	0	24	0
34	Վարդենիս	340	7	0
35	Ճամբարակ	0	18	0
36	Դիլիջան	0	57	118
37	Վայք	320	4	0
38	Եղեգնաձոր	210	15	0
39	Ջերմուկ	0	46	0
40	Սիսիան	0	52	18
41	Գորիս	0	45	4
42	Կապան	858	77	72
43	Մեղրի	0	24	0
	Ընդամենը	12273	4036	1038

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ և ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարա-վերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում մաքուր ջրի պոմպի սնուցող 350 մետր երկարությամբ մալուխը և էլեկտրական վահանակը կարճ միացման հետևանքով այրվել էին: Փոխարինվեցին մալուխը և էլեկտրական վահանակը իր ավտոմատիկայի սարքերով: Կատարվեց նաև մանր ճաղավանդակների քերիչ սանրերի կարգաբերում: Որպես արդյունք բոլոր սարքավորումներն աշխատում են բնականոն ռեժիմով:

- Մարտունու կեղտաջրերի մաքրման կայանի օդամուղի ռոտորի ածխե թիթեղները մաշվել էին և այդ պատճառով օդ չէր մղվում դեպի սարքավորումներ: Արդյունքում դրանք փոխարինվեցին նորով և այժմ օդամուղը աշխատում է բնականոն ընթացքով: Խաթարվել էր նաև մանր ճաղավանդակի ավտոմատ աշխատանքը, որը նս վերանորոգվեց:

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանում խցանվել էր մանր ճաղավանդակը, ինչի հետևանքով իր տեղից խախտվել էր քերիչ սանրը: Մանր ճաղավանդակը մաքրվեց խցանումից, իսկ քերիչ սանրը կարգաբերվեց: Ներկայումս բոլոր սարքավորումներն աշխատում են բնականոն ռեժիմով: Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	59,046	18
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	82,393	28.8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	172,563	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	114,602	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	126,313	9.9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	20,033	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	14,221	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	7,800	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	7,600	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	3,332	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 336 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 252 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.09.2023թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 606,561 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2023թ. օգոստոս ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	672,822	578,223	85,9
	Իրավաբանական անձ	31,872	28,338	88,9

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	744,510	593,856	79,8
	Իրավաբանական անձ	37,410	27,834	74,4

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 762 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Օգոստոս ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4937 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 08.2023
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2306	1502	391	4199
	Իրավաբանական անձ	502	162	74	738
	Ընդամենը	2808	1664	465	4937

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ օգոստոս ամսին փոխարինված 4937 ջրաչափերի մոտ 43 %-ը (կամ 2129 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 348,279 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2023թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Օգոստոս ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,881 մլն. դրամ (101 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Օգոստոս ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 187 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 21.3 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում են դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2023թթ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
27,301	3,711,366,202	14,694	1,672,708,825	797	152,642,744	11,811	1,886,014,633	10,186	1,182,475,299

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 54 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 3 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.09.2023թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	11,340	2,969
Բնակիչ-բաժանորդներ	7,938	1,894
Իրավաբանական անձեր	3,402	1,074

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 354.9 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով: Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2023 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.09.2023թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	714,568	592,718	82.95	36,354	27,825	76.54
	Առանց ջրաչափի	27,825	1,138	3.80	1,056	9	0.85

Տվյալների բազայում 01.09.2023թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	886,158	387,571	43.74	40,083	8,148	20.33

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:
 Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 6103 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1002 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:
 Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2455	2011	81.9
գ.Պոռշյան	1688	1155	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5994	1934	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիրը:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 16614, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 15462, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 4166, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 5165, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2608, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4073 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 7172 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՅՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացուցների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացուցների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	512	226,766	41,609,441

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ




Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի օգոստոս ամսվա շարունակականության տվյալը կազմում է 96.3%, ինչը 0.6%-ով պակաս է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում «Շարունակականության և մոնիթորինգի բաժնի» կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 45 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը՝




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2023թ-ի օգոստոս ամսին 2022 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 311 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 495 հազար կվտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում աճել է 13391 կՎտ.ժ (2.72%), այն դեպքում, երբ նորակառույց շենքերի 7 պոմպակայանն ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



Երևան քաղաքի բակային պոմպեր

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել է 43 էլ. հաշվիչ: Փոխարինվել է «Մայիսյան» պ/կ-ի էլ. հաշվիչը: Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ԿՈՒՊ (կարգավորվող ուղիղ բաղադրիչում) կատարվել է առևտրային գործընթաց, որի արդյունքում տնտեսվել է 8,027,365 ՀՀ դրամ: Կատարվել է էլ. էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում:

Պոմպակայանների ուսուսմասիրություն

Թվով 41 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսուսմասիրություններ, որոնց արդյունքում 32 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 336 բակային պոմպակայանում կատարվել են ուսուսմասիրություններ, որոնց արդյունքում թվով 252 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ.սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ:

Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում չորս հասցեներում տեղադրվել են ինվերտորային համակարգեր.


- a Մուրացան 113/2 (Er-33) Շիրակի 2ա (She-142)
- Սայիսի 9-ի 11շ. (She-51) Սելիքյան 2ա (Sh-10)

Ինվերտորային պոմպի տեղադրում

Հաշվետու ամսում վեց հասցեներում տեղադրվել են ինվերտորային պոմպեր.

- c Ե. Թաղևայան 2-4-6 (She-114) Կամո 50 (Shir-26)
- Կամոյի 71 (Shir-40) Շահինյան 4 (Shir-47)
- Ղանդիլյան 10,11,22,27ա (Shir-41) Իսահակյան 2 (Shir-50)

S խաղված ընդհանուր 81 ինվերտորային համակարգը պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, ավելացել է 5,567 կՎտ.ժ՝ 3%:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 35 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

Երևան քաղաքի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան


● 2023թ. օգոստոս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 612 330 կՎտ/ժամ (12,84%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



● Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլ. էներգիայի ծախսն ավելացել է 29 914 ԿՎտ/ժ/ամիս կամ 0.95 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան

● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 846 329 ԿՎտ/ժամ 9,12 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են ապրիլ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Երևան քաղաքի Տիգրան Մեծ պողոտայի հարակից փողոցների, Թորոմունյան փողոցի ջրագծերի թարմացում կատարողական գծագրերի հիման վրա	քաղաք	1
Շիրակի մարզի Սալուտ, Մուսայելյան, Հարթաշեն, Ջուլգաղբյուր, Կարմրավան, Աշոցք, Բավրա համայնքների ջրատար համակարգի բացակայող տվյալների լրացում և թարմացում	համայնք	7
Հրազդան, Չարենցավան, Աշտարակ, Սիսիան, Մեղրի, Ագարակ, Թումանյան, Այրում, Տաշիր քաղաքների ջրագծերի հիդրավիլի մոդելավորում	քաղաք	9
Արարատի մարզի Այնթափ, Նորաբաց, Դարբնիկ, Արբաթ, Դարակերտ, Ղուկասավան, Դաշտավան համայնքների ջրի բաշխիչ համակարգերի հիդրավիլի մոդելավորման համար ջրագծերի թարմացում և մոդելի կառուցում	համայնք	7
Կատարվել է թվով 401 տեխնիկական պայմանների թվայնացում	Տեխ.պայման	401
Էլեկտրամատակարարման (119), գազամատակարարման (14) և կապի միջոցների (11) նախագծերի թվայնացում	թվայնացում	144
Կատարվել է Երևան քաղաքի սպասարկման տեղամասերի տարածքներում 2023 թվականի մայիս-հունիս ամսինների ընթացքում իրականացված վթարավերականգնողական աշխատանքների մուտքագրում «ԱՏ» համակարգ: Կառուցվել է 4327 մ ջրագիծ, 514մ կոյուղագիծ, տեղադրվել կամ փոխարինվել է թվով 23 փական	քաղաք	1
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	50
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	189
«Ինտերակտիվ» համակարգում բաժանորդ կետերի ուղղում	բաժանորդ	581
ԱՏՀ-ում Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2623
ԱՏՀ-ում Մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	9460
ԱՏՀ-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1810
ԱՏՀ-ում մարզերի կոյուղու երկարությունը	կմ	1827

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

● Արզնի 1 ջրատարի վրա նախորդ ամիս հայտնաբերված վթարի (որը առաջացել էր ոչ ճիշտ հողային աշխատանքների արդյունքում) հետևանքով ջրատարի 3 թուջե խողովակ ընկան շինարարական հրապարակ: Կատարվեց ջրատարի կանգառ, կազմակերպվեցին ջրատարի վերականգնման աշխատանքներ, որից հետո կատարվեցին ջրատարի բնականոն ռեժիմի բերման աշխատանքներ:



● «Գիժ» սար-Նոյեմբերյան ջրատարի ուսումնասիրման նպատակով, կատարվել են այցելություններ նշված տարածքներ և պարզվել է, որ «7 Աղբյուր» կապտաժն ունի վերանորոգման կարիք և ջրատարի սկզբնամասի մոտավորապես 8կմ-ը գտնվում է անմխիթար վիճակում, որի պատճառով չափված ≈ 25լ/վ ջրատը չենք կարողանում իրականացնել:



● Ապարան-Երևան ջրատարի շրջայցի ընթացքում հայտնաբերվեց չաշխատող օդահեռ փական, որտեղ կար 10լ/վ արտահոսք: Փականը վերանորոգվելուց հետո վթարը կանխվեց:

Կատարվել են նաև ջրաքանակների կարգաբերման և բաշխման աշխատանքներ:



3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Օգոստոս ամսվա ընթացքում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Քաղաք Մասիս «Արարատյան 3/4» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի հնամաշ և շարքից դուրս եկած վակուում կարգավորիչը փոխարինվել է նորով, ինչն էլ ապահովել է հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:



● Քաղաք Վեդի «Արջանոց» քլորակայանում տեղադրվել է «Saniket» հիպոքլորիդի հաբի սարքավորում: Տեղադրվել է նոր քլորակայան և կառուցվել քլորացման համակարգ:



● Քաղաք Միսիանի «Բոնակոթ» քլորակայանում տեղադրվել են հեղուկ քլորի համակարգի «Grundfos» սարքավորումները և մոնտաժվել քլորագծերը:



● Քաղաք Իջևանի «Քարքարուտ» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի ինժեկտորը և վակուում կարգավորիչը փոխարինվել են նորերով՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:

● «Բերդ» ՋՄԿ-ի ուղղաձիգ պարզարաններից մեկի շահագործումը ձմռան ամիսներից մինչ այսօր հարկադրված դադարեցվել էր. պատճառը է/բ կոնստրուկցիայի տարբեր հատվածներում առկա ճաքերն էին (5 տեղ, մոտ 20 գծ/մ), որոնք հանգեցնում էին մոտ 6 լ/վ ջրակորուստի: Պարզարանի վերանորոգմանն ուղղված աշխատանքների արդյունքում այժմ վերացվել է ջրակորուստը և ՋՄԿ-ն շահագործվում է իր ամբողջ հզորությամբ:



● «Չանախչի» ՋՄԿ-ում քլորակայանի խարխուլ վիճակում գտվող դուռը փոխարինվել է մեկ այլ տեղում պատրաստված մետաղական դռնով:

● «Տեխնիկական» և «Հարավ» շահագործման տնօրինությունների համատեղ ջանքերով «Զվար-Մեդրի» և «Մեթենց-Մեդրի» ջրատարների փոխկապակցող (կոռոզիայի ենթարկված, հետագա շահագործման համար ոչ պիտանի) հատվածի մի մասը L=80մ, DN100 փոխարինվել է Pe dn110, PN=16 խողովակով և «Մեթենց» աղբյուրից ավելցուկային ջրերի հեռացման անցանկալի երևույթը բացառելու համար վերոնշված ջրագծի վրա տեղադրվել է լողանային փականով համակցված (ինքնաշեն) մեխանիկական կառավարման հանգույց:




3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 51577 զանգ:

● Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 11496 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 9035 զանգ (78,6%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2461 զանգ (21,4%):

● Շահագործման վերաբերյալ ստացվել է 40081 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 29776 զանգ (74,3%), իսկ մարզերինը՝ 10305 զանգ (25,7%):



185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր

	Ստորաբաժանում	2022 Օգոստոս	2023 Օգոստոս	
Առևտրային	Ընդամենը	12604	11496	-8.79%
	Երևան	9888	9035	-8.63%
	Մարզեր	2716	2461	-9.39%
Շահագործում	Շահագործում	29499	40081	35.87%
	Երևան	20769	29776	43.37%
	Արաբկիր	3613	5182	43.43%
	Քանաքեռ-Զեյթուն	1752	2436	39.04%
	Սաշտոց	3490	4831	38.42%
	Շահումյան	2624	3545	35.10%
	Շենգավիթ	2225	3692	65.93%
	Կենտրոն	3498	4698	34.31%
	Հյուսիս/Ավան Լոր Լորք/	1731	3741	116.12%
	Էրեբունի	1836	1651	-10.08%
	այդ թվում կոյուղու վթար	134	168	25.37%
	այդ թվում դիտահորի խցանում	4256	3436	-19.27%
	ՄԱՐԶԵՐ	8730	10305	18.04%
	Հարավ	4007	5261	31.30%
	Հյուսիս	4723	5044	6.80%
	այդ թվում կոյուղու վթար	60	58	-3.33%
	այդ թվում դիտահորի խցանում	2744	2755	0.40%
Ընդամենը	42103	51577	22.50%	

● 2022թ. օգոստոս ամսվա համեմատ՝ 2023թ. օգոստոս ամսին 8,79%-ով նվազել է առևտրային զանգերի քանակը և 35,87%-ով ավելացել է շահագործման զանգերի քանակը.

● 2022թ. օգոստոսի համեմատ՝ 2023թ. օգոստոս ամսին 84%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 61%-ով ավելացել է 5 րոպեից ավել զանգերի քանակը և 116%-ով հայտարարությունների լուսն ավտոմատ ծառայության միջոցով:

● 2022թ. օգոստոսի համեմատ՝ 2023թ. օգոստոս ամսին 67,31%-ով ավելացել են ջրամատակարարման բողոքները:



ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հաշվետու ամիսը՝ օգոստոսը սկսվեց Վեոլիայի համակարգում արտակարգ պատահարով՝ «Արգնի 1» ջրատարի վթարով, որին անմիջապես անդրադարձավ Հանրային կապերի բաժինը:



Վթարից քիչ անց, Ընկերության ֆեյսբուքյան էջում հրապարակեց վթարով պայմանավորված Երևանի Կենտրոն, Էրեբունի և Արաբկիր վարչական շրջաններում ջրանջատման մասին հաղորդագրություն համապատասխան տեսանյութով: Այնուհետև, առանձին հրապարակմամբ անդրադարձ եղավ վթարի պատճառներին՝ ներկայացնելով, որ Պտղնու ձորում անհայտ անձինք շինարարական աշխատանքներ իրականացնելիս հեռացրել են «Վեոլիա Ջուր» ընկերության 900 մմ-ոց «Արգնի 1» թուջե ջրատարի տակ գտնվող հողը, ինչի հետևանքով ջրատարը մացել է օդում և փլուզվել: Արդեն կեսգիշերին արված հրապարակումն ու նկարները վերաբերում էին վթարի հետևանքների վերացմանը, և որ արվում է ամեն ինչ արդեն

առավոտյան ջրամատակարարումը վերականգնելու համար: Հաջորդ առավոտյան, ևս մեկ հրապարակմամբ սպառողներին տեղեկացվեց, որ սկսվել է ջրատարի վերագործարկումը և շուտով բնակավայրերում կվերականգնվի կանոնավոր ջրամատակարարումը: Թեմայի վերաբերյալ վերջին հրապարակումը եղավ օրեր անց, երբ տեղեկացվեց, որ Վեոլիա Ջուր ընկերությունը դիմել է ՀՀ ոստիկանություն՝ պարզելու համար իրավախախտում կատարած անձանց՝ օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար:

Համակարգում այլ վթարներ էլ գրանցվեցին, որոնց վերացման շնորհիվ հնարավոր եղավ տնտեսել մեծ ջրաքանակ: Միայն 3 անգամ հաշվետու ամսում վթարվել է Վարդենիս քաղաքի Երևանյան փողոցի ջրատարը՝ մեծաքանակ ջրի կորստով: Ժամերի ընթացքում Վեոլիաթիմը վերացնելով վթարը՝ վերականգնել է փողոցի կանոնավոր ջրամատակարարումը:

Շահագործման տեղամասերի կողմից վթարավերացման աշխատանքներ են իրականացվել Երևանի Մալաթիա-Մեքաստիա, Էրեբունի վարչական շրջաններում, Սյունիքի մարզի Կարճևան, Բոնակոթ գյուղերում, Ալավերդի, Գավառ քաղաքներում և այլ բնակավայրերում:

Շատ կարևոր խնդիր լուծվեց Նուռնուսի ամառանոցային հատվածում, որը լուսաբանվեց Հանրային կապերի բաժնի կողմից: Բանն այն է, որ տարիներ շարունակ Նուռնուսի ամառանոցներ ջուր է մղվել 3 ջրատարով՝ 3 կապտաժիգ վայրկյանում 60 լիտր ջրաքանակով: Վերջերս, սակայն, ամառանոցային հատվածում շինարարական աշխատանքներ իրականացնելիս և միացումներ տալիս չափումները ցույց են տվել վայրկյանում 5-6 լիտր ջրի կորուստ: Այսինքն սպառողներին հասնում էր միայն 2 ջրատարի ջուրը: Քանի որ դա բավականին մեծ ջրաքանակ է այդ տարածաշրջանի համար, Վեոլիաթիմը Նուռնուսի՝ 2 կմ ձգվող ամառանոցային տարածքներում որոնողական աշխատանքներ սկսեց, որը տևեց 25 օր: Ի վերջո, 2,8 մետր խորության վրա հայտնաբերվեց թուջե ջրատարը և միացվեց համակարգին: Այժմ վայրկյանում 6 լիտր ջուրը, որը կարող է ենթարկվել սեզոնային տատանման հասնելով մինչև 10լ/վ, ուղղվում է Բյուրեղավան և Արգնի բարելավվելով այս բնակավայրերի ջրամատակարարումը:



Շարունակելով Վեոլիաթիմի սեփական ուժերով հանրապետության տարբեր բնակավայրերում ջրագծերի վերակառուցման լուսաբանման աշխատանքները օգոստոս ամսին Հանրային կապերի ծառայությունը անդրադարձավ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի 11 փողոց ներառող Բանդեր թաղամասին, որտեղ Ընկերությունը 96 միլիոն դրամի շրջանակներում 800 բաժանորդի համար կառուցում է 3350 գծամետր նոր ջրագիծ և մուտքագծեր: Վերջինիս մասին հրապարակում եղավ ոչ միայն ընկերության ֆեյսբուքյան էջում, այլև ռեպորտաժ պատրաստվեց նաև մարզային Քյավառ TV-ով:

Բաշխիչ ցանցի կառավարման, փողոցների և թաղամասերի ջրի ճնշումները կարգավորելու և կանոնավոր ջրամատակարարում ապահովելու տեսանկյունից շատ կարևոր էին ճնշման կարգավորիչ փականների տեղադրման և փոխարինման աշխատանքները: Դիլիջան, Կապան քաղաքներում, Կարբի, Մուղնի, Օհանավան գյուղերում ձկփ-ներ տեղադրելով Վեոլիաթիմը կարողացավ բնակավայրերում ապահովել կայուն ջրամատակարարում: Դե իսկ Երևանյան և հանրապետության այլ

քաղաքներում և գյուղերում ակտիվորեն շարունակվել են նոր ջրագծերի վերակառուցման աշխատանքները: Ջրահեռացման հետ կապված խնդիրների լուսաբանումը ևս դուրս չի մնացել Հանրային կապերի բաժնի ուշադրությունից: Երևանի Էրեբունի վարչական շրջանում շարունակվել են փչող մեքենաների միջոցով կոյուղագծերի լվացման և մաքրման աշխատանքները: Ծաղկաձորում քաղաքապետարանի կողմից սկսած փողոցների բարեկարգման աշխատանքներին զուգահեռ Վեոլիաթիմը թարմացրեց ջրահեռացման համակարգը: Իսկ Սիսիան քաղաքի Իսրայելյան փողոցում կոյուղու խցանված կոլեկտորը նույնիսկ կոյուղի մաքրող, փչող մեքենայով հնարավոր չլինելով վերացնել, որոշվեց խցանված հատվածը փոխարինել նոր, երկշերտ, ծալքավոր պոլիէթիլեն խողովակաշարով:

Օգոստոս ամսվա գլխավոր և կարևոր պաշտոնական նորությունն այն էր, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը Վեոլիա Ջուր ՓԲԸ-ին տրամադրեց Կոտայքի մարզի Արամուս համայնքում «Կաթնաղբյուր» արևային-էլեկտրակայանի կառուցման և բացառապես սեփական կարիքների համար էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա: Դրանով փաստորեն մեկնարկեց «Վեոլիա Գրուպ»-ի սեփական միջոցներով ֆինանսավորվող ծավալուն ծրագիրը, որի ամբողջական իրականացման արդյունքում կայանների արտադրած էլեկտրաէներգիան կուղղվի ընկերության կողմից շահագործվող էներգատար համակարգերի կարիքների բավարարմանը: Հրապարակվեց նաև Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դըկոտինյի և ընկերության տնօրեն տիկին Մարիաննա Շահինյան հանդիպումը, որի ժամանակ քննարկվել են ոլորտի մարտահրավերներն ու Հայաստանի իշխանությունների հետ միասին դրանց արձագանքելու միջոցները:

Հաշվետու ամսում հրապարակուեմեր են եղել ինչպես ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման, այնպես էլ վթարային և պլանային ջրանջատուեմերի մասին:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*




5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

● ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 247-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ սահմանված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները, Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 38 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը.

- «Քլորակայաններ շահագործող, սպասարկող անձնակազմի մասնագիտական որակավորման» թեմայով դասընթաց/գիտելիքների ստուգում,
- «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները»,
- Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց:



● ՈԱԱ Բաժնի աշխատակիցը մասնակցեց Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Գոտու կողմից կազմակերպված «Վերապատրաստեք դասընթացավարներին» առցանց ՖՐԵՄԿՈ-ին, որը նպատակ ուներ նախապատրաստել դասընթացավարներին նախորդ ամիս իրականացված «Էկոլոգիական վերափոխման ՖՐԵՄԿՈ» դասընթացի հետագա կազմակերպման և իրականացման համար:




● ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 247-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ սահմանված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները, Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 4 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը.


- «Քլորակայանի պատասխանատու անձի մասնագիտական որակավորման» թեմայով դասընթաց/գիտելիքների ստուգում,
- «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները»,
- Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց:



2022-2023թթ. կազմակերպված դասընթացների/հրահանգավորումների մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2022-2023թթ. կազմակերպված դասընթացների/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ




5.2 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 3 ՋՄԿ-ում, 1 ԿՄԿ-ում, 8 պոմպակայանում և 35 քլորակայանում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսուսնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 25 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանուսների ղեկավարներին՝ արձանագրված թերությունների շտկման նպատակով:

2023 թ. իրականացված անվտանգության ստուգայցերի քանակներն ըստ օբյեկտների



5.3 ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

● ՈԱԱ բաժինը, առաջնորդվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 27 մարտի 2003 թվականի N 347-Ն և 15-ը հուլիսի 2004 թվականի N1089-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներով, մեկնարկել է համապատասխան մասնագիտության շուրջ 1250 աշխատողի առողջական վիճակի դիսկոմպենսացիայի հսկողության, մասնագիտական հիվանդությունների կանխարգելման և դրանց սկզբնական նշանների ժամանակին հայտնաբերման, դժբախտ պատահարների կանխման ու աշխատանքի անվտանգության պահպանման, վարակիչ և մակաբուծային հիվանդությունների տարածման կանխարգելման, հիվանդությունների հայտնաբերման, տարեկան պարտադիր բժշկական զննությունները և լաբորատոր հետազոտությունները:

● Բժշկական զննությունները և հետազոտությունները հաշվետու ամսում ևս իրականացվում են ըստ նախապես կազմված պլան-ժամանակացույցի և կավարտվեն սահմանված ժամկետում:

5.4 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով և ելնելով համակարգերում տեխնաձին վթարների կանխարգելման և բացառման, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում «Պրոմէքսպերտ Գրուպ» ՍՊԸ-ի փորձագետների կողմից, պլան-ժամանակացույցի համապատասխան իրականացվել են թվով 36 Արտադրական Վտանգավոր Օբյեկտի (25 քլորակայան, 10 ամբարձիչ սարքավորում, 1 ամբարձիչ հարմարանքով կահավորված ավտոմեքենա) տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ:

5.5 ԲՌԿ ՍՏԱՆԴԱՐՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ, ՆՈՐ ԲՌԿ ՍՏԱՆԴԱՐՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Բաժինը, ղեկավարվելով Վեոլիա Գրուպի բարձր ռիսկերի կառավարման ստանդարտների պահանջներով, հաշվետու ամսում իրականացրել է Բարձր ռիսկերի կառավարման ստանդարտների հայերեն լեզվով թարգմանության, ինքնագնահատման և ներդրման աշխատանքներ:

● Միաժամանակ իրականացվում են Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի կառավարման նոր թվով 5 ստանդարտների (Երթևեկությունը աշխատավայրում, Վտանգավոր էներգիայի վերահսկում, Գազաէլեկտրաէնակցման աշխատանքներ, Աշխատանքներ բարձրության վրա, Աշխատանքներ փակ տարածքներում) հայերեն լեզվով թարգմանության և ադապտացման աշխատանքները:

5.6 ԱՊՄ-ՆԵՐԻ ԵՎ ԿՊՄ-ՆԵՐԻ ՁԵՆՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Բաժինը, հաշվի առնելով ինժեներատեխնիկական անձնակազմի կողմից իրականացվող գործառույթների բնույթը, դրանց կատարման ընթացքում ի հայտ եկող հնարավոր վտանգները և վերջինիս հետ կապված ռիսկերը, հիմք ընդունելով ՀՀ գործող ստանդարտների և Գրուպի ԲՌԿ Ստանդարտների պահանջները, հաշվետու ամսում մշակել է անհատական պաշտպանության միջոցների (ԱՊՄ) և կոլեկտիվ պաշտպանության միջոցների (ԿՊՄ) տեխնիկական մասնագրերը, որոնց հիման վրա Ընկերությունը ձեռք է բերել ԱՊՄ-ներ և ԿՊՄ-ներ և տրամադրել Ընկերության կառուցվածքային ստորաբաժանուժների և աշխատողներին:

● ԱՊՄ-ների և ԿՊՄ-ների ձեռք բերման գործընթացը շարունակական է և այդ առնչությամբ պարբերաբար իրականացվում է կարիքների գնահատում և անհրաժեշտ քանակների ձեռքբերում:



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Սարգսի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am